ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «Էթիկան և բիզնեսը 21-րդ դարում» խորագիրը կրող Երիտասարդ տնտեսագետ ուսանողների միջազգային 5-օրյա գագաթնաժողովին

29 նոյեմբերի, 2011թ.

Թանկագին հյուրեր, սիրելի ուսանողներ,

Ուրախ եմ, որ այսօր Դուք՝ երիտասարդ տնտեսագետ ուսանողներդ հյուրընկալվում եք Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Սիրով ողջունում եմ Ձեզ:

Մեր համալսարանը Հայաստանի Հանրապետության խոշորագույն ուսումնական հաստատություններից է՝ իր հարուստ ավանդույթներով, իր ավելի քան 80-ամյա պատմությամբ, իր բազմափորձ պրոֆեսորադասախոսական կազմով և արհեստավարժ վարչական աշխատակիցներով:

Այսօր փոխվում են բուհերին ներկայացվող պահանջները: Աճող մրցակցության պայմաններում մեր համալսարանի խնդիրն է մշտապես բարելավել կրթության որակը, ճկուն արձագանքել աշխատաշուկայի նոր պահանջներին և ապահովել այնպիսի պայմաններ, որոնք բավարար կլինեն խորը գիտելիքներ ու ստեղծագործ միտք ունեցող, խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ գտնելու կարողությամբ օժտված և կառավարման ժամանակակից գործիքներին տիրապետող մասնագետների պատրաստման համար: Այդ համատեքստում, մեծապես կարևորվում է նաև ուսանողների մասնակցությամբ միջազգային համաժողովների և գիտական քննարկումների կազմակերպումը:

Այս նպատակն է հետապնդում Ձեր՝ «Էթիկան և բիզնեսը 21-րդ դարում» խորագրով կազմակերպած գագաթաժողովը, ուր կքննարկվեն ոչ միայն էթիկայի, իշխանության, գործարարության, այլև՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությանը, դրա հետևանքներին ու դասերին նվիրված հիմնահարցերը:

Ուրախալի է, որ գիտաժողովին մասնակցելու հայտեր են ներկայացրել տարբեր երկրների տնտեսագետ ուսանողները, ովքեր հանդես կգան իրենց երկրներում առկա խնդիրներին նվիրված զեկույցներով: Այն, ինչ խոսք, հետաքրքիր կլինի մյուս երկրների ներկայացուցիչներին, քանզի գլոբալ ճգնաժամի բացասական ազդեցությունը զգալի է բոլորիս համար:

Մյուս կողմից՝ այս համաժողովը հնարավորություն կտա ներկայացնելու ճգնաժամից դուրս գալու Ձեր «դեղատոմսերը»՝ միտված էթիկայի երևույթների վերլուծական, հայեցակարգային և համեմատական մեծությունների ուսումնասիրությանն ու Եվրոպայում գործարարության վերջին էմպիրիկական հայտնագործությունների և գործարար միջավայրի հետազոտմանը: Մեզ համար ամենակարևորը՝ 21-րդ դարում էթիկայի և գործարարության մարտահրավերները քննարկելու, դրանց համարժեք պատասխանները մշակելու և նոր իրավիճակում ի հայտ եկող հնարավորությունների բացահայտումն է:

Գագաթաժողովի սիրելի՛ մասնակիցներ.

ցանկանում եմ Հայաստանի Հանրապետությունում անցկացրած Ձեր յուրաքանչյուր օրը դառնա անմոռանալի ու տպավորիչ, իսկ գագաթաժողովին մաղթում եմ արդյունավետ ու բեղմնավոր աշխատանք:

Շնորհակալություն: